ԿՐԹԱԿԱՆ

## ՔԵԹԵՎԱՆ ՆԱՏՐԻԱՇՎԻԼԻ. ՍԿՍՎԵԼ Է ՊՐՈՖՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ



*Ապրիլի 10-22-ը, Վրաստանում կանցկացվի պրոֆտեխուսումնարաններում կրթություն ստանալ ցանկացող անձանց գրանցումը: Այդ մասին հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Քեթեւան Նատրիաշվիլին:*

Նրա խոսքով, շահագրգռված անձանց տրված է՝ գրանցվելու եւ անվճար կրթություն ստանալու հնարավորություն՝ զբոսաշրջության, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ այլ մասնագիտություններով:

Գրանցում հնարավոր է անցնել հանրակրթական ռեսուրս-կենտրոններում, որոնք գործում են երկրի ողջ մասշտաբով, ինչպես նաեւ՝ անմիջականորեն մասնագիտական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում:

## ԼԻԱ ԳԻԳԱՈՒՐԻ. «ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԿՍԿՍԵՆՔ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ»



*Նոր ուսումնական տարում, երկրորդ դասարանի աշակերտների համար, դասաժամը 5 րոպեով կնվազեցվի:*

Այդ մասին հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին եւ հավելեց, որ, նոր ուսումնական տարում, տարրական դասարաններում, առաջինից մինչեւ յոթերորդ դասարաններում կներդրվի ազգային ուսումնական նոր ծրագիր, որի բաժիններից մեկը առնչվում է նվազ ծանաբեռնված ուսումնական գործընթացին: «Առաջինից մինչեւ վեցերորդ դասարանի աշակերտների համար կներդրվի ազգային ուսումնական նոր ծրագիր: Նշանակալից է նաեւ, որ բոլոր դասարաններում կունենանք բովանդակությամբ եւ տեխնիկապես նորացված նոր դասագրքեր՝ բացարձակապես տարբերվող մեթոդաբանությամբ: Կներդրվեն նաեւ տարբեր առարկաներ, որոնք բավական կթուլացնեն ծանրաբեռնվածությունը, կնվազեցվեն տնային առաջադրանքները, առավել շատ ուշադրություն կհատկացվի դասարանական եւ դպրոցական ակտիվությունների վրա: Նշանակալից է նաեւ այն, որ էլեկտրոնային ռեսուրսները, որոնք առավել ակտիվ են դարձնում ուսումնական գործընթացները, կդառնան բազմերանգ: Յուրաքանչյուր դասարագիրք եւ ուսուցիչների հանձնարարական գրքերը կհամալրվեն նման ռեսուրսներով: Նորամուծությունների թվում է նաեւ այն, որ երկրորդ դասարանցիների համար դասաժամը կնվազեցվի հինգ րոպեով: Մեր նպատակն է, որպեսզի երեխաներն առավել կողմնորոշվեն ունակությունների եւ ավելի քիչ՝ անգիր անելու ուղղությամբ, ավելի շատ մտածեն ու տրամաբանեն եւ՝ ավելի քիչ՝ առաջադրանքների կատարման ուղղությամբ»,- ընդգծեց Լիա Գիգաուրին:

## «ՄԵՐ ԲԱՆԱԿԸ». ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ



*Երկրի զինմասնագետները հանրակրթական դպրոցներում դասախոսություններ են կարդալու Վրաստանի բանակին նվիրված թեմայով: Այդ կապակցությամբ, Վրաստանի պաշտպանության նախարարությունը, կրթության նախարարության հետ համատեղ, սկսել է «Մեր բանակը» մասշտաբային նախագիծը:*

Նախագծի շրջանակներում՝ Վրաստանի զինված ուժերի ներկայացուցիչները, երկրի բոլոր հանրային դպրոցներում, 11 եւ 12-րդ դասարանի աշակերտների համար, կկարդան դասախոսություններ՝ Վրաստանի զինված ուժերի պատմության, նպատակների ու խնդիրների, պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների, Վրաստան-ՆԱՏՕ հարաբերությունների, բանակում պարտադիր եւ պայմանագրային ծառայության վերաբերյալ, մանրամասն տեղեկատվություն կներկայացնեն զինպահեստի նշանակման եւ մոբիլիզացման, միջազգային առաքելություններում վրաց զինծառայողների մասնակցության մասին:

Նախագծի շնորհանդեսը, ապրիլի 11-ին, անցկացվեց Թբիլիսիի թիվ 105 հանրային դպրոցում: Շնորհանդեսին ներկա էին Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին, Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Վլադիմիր Չաչիբաիան:


ՆՈՐՈՒՅԹ

ՄԱԳԹԻ
MAGTI

ՄԱԳԹԻԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ

ՀԱՄԱՑԱՆՑ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՆՑ ԼԻՄԻՏԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱՅԻՆՈՎ, ԱՄՍԱԿԱՆ՝ 29 ԼԱՐԻՈՎ

Օպտիկական – մանրաթելային համացանց
20 մգ/վրկ փաթեթ

IP հեռուստատեսություն
Վերափաթեթավորման գործառույթով – 98 ալիք

Բջջային հեռախոս
Սերվիս «Մերոնք», առանց լիմիտի խոսակցություն Մագթիկոմի բջջային ցանցով ընտանիքի 4 անդամների միջև

Նվեր
- WiFi սարք տանը՝ համացանցի ազդանշանի տարածման համար
- Հեռուստատեսության 1 լրացուցիչ փաթեթ

Ծրագրերի մուտքագրումը՝ անվճար
Առաջարկությունը ուժի մեջ է միացումից հետո 2 տարվա ընթացքում

Կապվեք՝ 11 00 11 - բջջային ցանցով,
032 217 00 00 – ցանկացած ցանցով
Մագթիկոմի ցանցով հեռախոսազանգը անվճար է:

www.magticom.ge


## ՍԵՐ ՈՒ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՅՐԵՐԻՆ




*Մարդկության համար «մայր» հասկացությունը արժեք է, նվիրում ու սրբություն: Այն իր մեջ ներառում է սեր, աստվածային գեղեցկություն, բարություն ու ներողամտություն, արարչագործություն ու հավերժություն....*

«Մայր, ջերմացնող արեւ, գարուն ու կյանք» խորագիրն էր կրում ապրիլի 5-ին, մայրաքաղաքի թիվ 103 հանրային դպրոցում, կազմակերպված հանդեսը: Արարողությանը գարնան, ջերմության մթնոլորտ էր տիրում, ուր հավաքվել էին ծնողներ, ուսուցիչներ, հյուրեր: Միջոցառման կազմակերպիչ, դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի Գայանե Մխիթարյանը ողջունեց ներկաներին, շնորհավորեց կանանց եւ մայրերին՝ Մայրության ու գեղեցկության տոնի առիթով: Ճաշակով, միանման զգեստներ հագած 5-րդ դասարանցիներն էին բեմին: Հույզերով ու ապրումներով լի էր նրանց խոսքը՝ ուղղված իրենց անգին մայրիկներին: Դպրոցականները ներկայացրեցին մեր գրականության դասականներ Հովհաննես Շիրազի, Եղիշե Չարենցի, Համո Սահյանի, Սիլվա Կապուտիկյանի, Վահան Տերյանի՝ բացառիկ մեղեդայնությամբ եւ զգացմունքների մաքրությամբ մայրական թեմայով գրված բանաստեղծությունները, բեմականացրեցին Ավ.Իսահակյանի «Մոր սիրտը», «Մայրը» լեգենդները, երգերի կատարումներով հանդես եկավ Դիանա Մինասյանը:

Ցերեկույթը գնահատեցին ու ներկաներին շնորհավորեցին ուսմասվար Հասմիկ Պապիկյանը, տողերիս հեղինակը, առանձնացնելով մոր դերն ու կարեւորությունը կյանքում, եւ՝ տոնը՝ որպես գնահատանք, ջերմություն փոխանցելու եւս մեկ առիթ:

**ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

*Վրաստանի ԿԳ նախարարության փորձագետ*

## ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ ԼՐԻՎՈՒԹՅԱՄԲ ԿՓՈԽՀԱՏՈՒՑՎԵՆ

*Մանկավարժության անաշխատունակության թերթիկները (բյուլետեն) լրիվությամբ կփոխհատուցվեն:*

Համապատասխան փոփոխություններ են կատարվել՝ ժամանակավոր անաշխատունակության դեպքում, օգնության նշանակման եւ վճարման կարգում: Հանրային դպրոցներում անաշխատունակության թերթիկով մանկավարժների վճարումը կիրականացվի՝ անաշխատունակ օրերի թվով ամսական աշխատավարձի բաժանման արդյունքում:

Այդ հարցով Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարի հրամանագիրը ուժի մեջ է մտել հունվարի 10-ից:

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

*Սովորաբար, ամուր ընտանիքի հիմքում սերն է եւ փոխըմբռնումը: Իսկ վերջինս միշտ չէ, որ արտահայտվում է խոսքերով, շարժումներով, նաեւ՝ հայացքով... Հետաքրքիր է, գիտնականները փորձե՞լ են, արդյոք, բացահայտել ամուսինների միջեւ փոխըմբռնման գաղտնիքը:*



***Տ.Սարգսյան***

***Թբիլիսի***

Ամուսինները լավ է են զգում միմյանց հույզերը, երբ դրանք դրական են: Այս եզրակացությանն է եկել ընտանեկան հոգեբան Քրիստինա Դ. Քուռնոսը: Նրա ուսումնասիրությունների արդյունքները հրապարակել է Family Process գիտական հանդեսը: Գիտնականի պնդմամբ՝ դրական հույզերը լավ են ազդում մարդկանց փոխհարաբերությունների վրա:

Բացասական հույզերը, նույնիսկ, եթե դրանք ընդհանրապես կապված չեն անձնական հարաբերությունների հետ, բացասաբար են ազդում զույգի փոխըմբռնմանը: Այս եզրակացությունը, ընդհանուր առմամբ, կիրառելի է բոլոր մարդկանց հարաբերությունների համար:

Բայց, ինչպես նկատում է հետազոտողը, ամուսինը կարեւորագույն սոցիալական պարտնյոր է մարդու համար, ուստի, նրա հետ փոխըմբռնումը չափազանց կարեւոր է: Հոգեբանն ընդգծում է, որ բացասական հույզերը ոչ միայն բարդացնում են ամուսինների փոխհարաբերությունները, այլեւ դժվար են ընկալվում:

Լավ տրամադրությունը ճիշտ է ընկալվում մյուս ամուսնու կողմից, որովհետեւ փոխանցվում է նրան, մինչդեռ հասկանալ, որ պարտնյորը տխրություն կամ վիշտ է ապրում, այնքան էլ դյուրին չի լինում: Բացասական հույզերը պարտնյորը սովորաբար կռահում է, բայց անմիջապես չի զգում: Հոգեբանը խորհուրդ է տալիս ավելի քիչ զայրանալ եւ ավելի ուշադիր լինել միմյանց նկատմամբ: Եթե ամուսինը զգում է, որ իր «կեսը» ինչ-որ բանից նեղված է, ապա արժե հետաքրքրվել, թե ինչ է պատահել եւ՝ առաջարկել իր օգնությունը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾՎԵՑ ՖԵՅՍԲՈՒՔԸ

facebook

*Այսօր ֆեյսբուքը մեր կենսակերպի անբաժանելի մասն է կազմում: Սակայն հետաքրքիր կլիներ իմանալ՝ ինչպե՞ս է այն առաջացել:*

***Վ.Ստեփանյան***

***Բոլնիսի***

2004 թվականի փետրվարի 4-ին ստեղծվեց ֆեյսբուք սոցիալական ցանցը, որի գլխավոր տնօրենը եւ համահիմնադիրներից մեկը ամերիկացի ծրագրավորող Մարկ Էլիոտ Ցուկերբերգն է: Նրա կարողությունը կազմում է 31,6 միլիարդ ԱՄՆ դոլար:

Մարկ Ցուկերբերգը ծնվել է 1984թ. մայիսի 14-ին, բժիշկների ընտանիքում: 10-12 տարեկան էր, երբ նրա համար համակարգիչ գնեցին: Մի քանի ամիս նա իր նոր խաղալիքից հեռու չէր գնում: Հետո սկսեց գրականություն ուսումնասիրել եւ ծրագրավորմամբ զբաղվել: Սովորել է Հարվարդի համալսարանի հոգեբանության բաժնում՝ միաժամանակ հաճախելով համակարգչային դասընթացների: Թերեւս հենց մարդկային հոգեբանության ուսումնասիրումն իր դերակատարումն ունեցավ ֆեյսբուքի ստեղծման գործում: 2006թ. ֆեյսբուքն արդեն հասանելի դարձավ ողջ աշխարհին:

Երկրաչափական պրոգրեսիայով աճում էր ինչպես օգտատերերի, այնպես էլ՝ միլիոնների թիվը: Կայքը թարգմանված է 15 լեզուներով՝ ներառյալ հայրեն: Հիմնվելով մարդկանց՝ միմյանց հետ շփվելու պահանջին՝ Մարկ Ցուկերբերգը դարձավ ամենաերիտասարդ միլիարդատերն աշխարհում:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԹԱՆԿ ՔԱՂԱՔՆԵՐԸ



Սինգապուրը հինգերորդ անգամ անընդմեջ գլխավորել է աշխարհի այն քաղաքների վարկանիշը, որոնք առանձնանում են թանկ ապրուստով: Այս մասին հաղորդել է Bloomberg-ը՝ վկայակոչելով The Economist Group-ը, որը կազմել է վարկանիշը: Ցուցակը կազմելիս հիմք է վերցվել՝ կենսամակարդակը Նյու Յորքում:

Բացի Սինգապուրից, բնակվելու համար ամենաթանկ վայրերի տասնյակ են մտել Փարիզը, Ցյուրիխը, Հոնկոնգը, Օսլոն, Ժնեւը, Սեուլը, Կոպենհագենը, Թել Ավիվը եւ Սիդնեյը:

Ընդամենը վարկանիշում տեղ են գտել աշխարհի 133 քաղաքներ: Ապրելու համար ամենաէժան քաղաքներն են ճանաչվել Դամասկոսը, Կարակասը եւ Ալմաթին:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՈՒՇ ՔՆԵԼԸ ԵՎ ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍԱԿԱՐ Է

***Նոր բացահայտում չէ այն, որ քնելը մարդու համար բնականորեն սահմանված պահանջ է, եւ անքնությունը, կամ քնելու համար բնականորեն սահմանված ժամանակի խախտումը, հանգեցնում է առողջության հետ կապված հակոտնյա երեւույթների:***

***Ստորեւ տրված նյութը որոշակիորեն բացահայտում է այն վնասակար հետեւանքները, որոնք կարող են ծագել՝ քնելու ժամանակի խախտման կամ անքնության դեպքում:***

**Մտավոր հյուծվածություն**

Ձեր ուղեղն ակտիվ հանգստանում է ժ. 21.00-ից մինչեւ 23.00-ն ընկած ժամանակահատվածում: Եթե դուք պառկում եք քնելու ժ. 23.00-ից հետո, ժամանակի ընթացքում մտավոր հյուծվածություն է առաջանում: Եթե ժ. 23.00-ից մինչեւ ժ. 1-ը դուք չեք քնում, ապա ձեր կենսական ուժերն աստիճանաբար սպառվում են, նյարդային համակարգում խախտումներ են առաջանում: Դա արտահայտվում է թուլությամբ, ծանրության եւ կոտրվածության զգացողությամբ: Եթե չեք քնում գիշերվա ժ. 1-ից մինչեւ 3-ը, ապա կարող է ջղագրգռություն առաջանալ: Ուղեղն ավելի լավ գործելու համար՝ հանգստի կարիք ունի:

Քնելը ոչ միայն կենսականորեն է կարեւոր, այլ նաեւ՝ գեղեցկությունը պահպանելու անենամատչելի միջոց է: Հենց քնած ժամանակ են տեղի ունենում բջիջների ակտիվ թարմացման եւ հյուսվածքների վերականգնման գործընթացները:

**Ավելորդ կիլոգրամներ**

Ամերիկացի գիտնականներն ապացուցել են, որ այն կանայք, որոնք պարբերաբար քիչ են քնում, ավելի արագ են գիրանում: Շարունակական քնի պակասը բացասաբար է ազդում նյութափոխանակության վրա, եւ գիրանալու հավանականությունը կրկնակի աճում է:

**Դիմադրողականության անկում**

Գիշերվա ընթացքում օրգանիզմը վերականգնվում է, չեզոքացվում են արթուն ժամանակ կուտակված բացասական հետեւանքները, ինչն էլ նպաստում է իմունային համակարգի ամրապնդմանը: Մշտապես արթուն լինելու դեպքում՝ տարբեր հիվանդություններով վարակվելու հավանականությունը մեծանում է:

**Ծերացում**

Քնած ժամանակ տեղի է ունենում մաշկի բջիջների վերականգնում, բարելավվում է արյան շրջանառությունը, ինչի շնորհիվ բջիջները հարստանում են թթվածնով, ամինաթթուներով, դիմային կնճիռները հարթվում են, բարելավվում է դեմքի գույնը: Սակայն, այս ամենը հնարավոր է միայն առնվազն գիշերվա ժամերին անընդմեջ քնելու դեպքում:

Ինչ վերաբերում է անքնությանը, ապա, դրա հիմնական պատճառը մելատոնինի՝ այն հորմոնի պակասն է, որն արտադրվում է ուղեղի կոնաձեւ ելունդում՝ էպիֆիզում, մթության ազդեցության տակ:



Երբ մելատոնինը հայտնվում է արյան մեջ, մարդու քունը սկսում է տանել եւ, որոշ ժամանակ անց, նա քնում է: Լույսի առկայությամբ «քնի հորմոնը» քայքայվում է, հենց այդ պատճառով էլ մենք, առավոտյան լույսը բացվելիս, արթնանում ենք: Եթե օրգանիզմում բավարար քանակությամբ մելատոնին է արտադրվում, մարդը ողջ գիշեր խոր քուն է մտնում, իսկ առավոտյան արթնանում է առույգ, հրաշալի տրամադրությամբ եւ ամբողջ օրն իրեն լավ է զգում: Իսկ եթե «քնի հորմոնը» բավարար չէ, քունը խանգարվում է, օրվա մեջ էլ մարդն իրեն թոշնած ու թույլ է զգում, հորմոնալ լուրջ տեղաշարժեր են առաջանում, խախտվում է նյութափոխանակությունը, տարբեր օրգաններում եւ համակարգերում խափանումներ են ծագում, եւ մարդն արագընթաց կերպով ծերանում է:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Չկա ոչինչ, որ կարելի չլինի բացատրել եւ՝ ոչինչ, որ անկարելի լինի բանականությանը:

***ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ***
***(VII դար)***
***Հայ գիտնական***

Թե չի սիրում՝ թո'ղ չսիրի, սակայն երբե'ք չբամբասի...

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(XII դար)***
***Վրաց բանաստեղծ***

Արվեստի թանկարժեք հատկությունը անկեղծությունն է:

***ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ***
***(1828-1910)***
***Ռուս գրող***

Լավ կլիներ, որ մարդ զններ իրեն, թե ինքն ինչ արժե բարեկամների համար, եւ ձգտեր՝ որքան հնարավոր է ավելի թանկ լինել:

***ՍՈԿՐԱՏԵՍ***
***(մ.թ.ա. 469-399)***
***Հույն փիլիսոփա***

Ուրիշներին հարգելը առիթ է տալիս հարգել ինքն իրեն:

***ՌԵՆԵ ԴԵԿԱՐՏ***
***(1596-1650)***
***Ֆրանսիացի փիլիսոփա***

Ամեն մարդ տարբերվում է ուրիշից եւ օր-օրի տարբերվում է իրենից:

***ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՈՊ***
***(1688-1744)***
***Անգլիացի բանաստեղծ***

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Երեք երեխա վիճում են, թե որի հայրն է ավելի արագաշարժ:*

*- Իմ հայրն այնքա՜ն արագաշարժ է, որ, կրակելով աղեղից, հասնում ու բռնում է նետը:*

*- Իսկ իմը՝ որսի ժամանակ կրակում է կենդանու վրա եւ բռնում է նրան՝ չթողնելով, որ ընկնի գետնին:*

*- Արագությունից ոչինչ չեք հասկանում: Իմ հայրը պետական հիմնարկում է աշխատում: Նա աշխատանքն ավարտում է ժամը 18-ին, իսկ տանն է լինում արդեն 17:15-ին:*

*☺ Գիշերվա ժամը 3:00 է, փոքրիկ աղջիկը խնդրում է:*

*- Մայրի'կ, հեքիաթ պատմի, է'լի:*

*- Սպասիր, բալիկս, հիմա հայրիկը կգա ու կսկսի հեքիաթներ պատմել մեզ երկուսիս:*

*☺ Տղան հարցնում է հորը.*

*- Պա, հարբածությունը ո՞րն ա:*

*- Հարբածությունը, տղես, այ օրինակ, էն երկու ծառը տեսնո՞ւմ ես, այ, երբ դա չորս հատ ա երեւում, էդ ժամանակ նշանակում ա, որ հարբած ես:*

*- Բայց ընդի 1 ծառ ա:*

*☺ Մեկը հյուր է գնում մանկության ընկերուհուն, որն ամուսնացել էր մի մեծահարուստի հետ: Տեսնելով նրա ամուսնուն՝՝ ականջին շշնջում է.*

*- Ինչպե՞ս ես ամուսնացել այս հիվանդի հետ, ախր նա ոչ միայն շլդիկ է, այլեւ կաղում է ու կակազում:*

*- Կարող ես բարձր խոսել. նա նաեւ չի լսում...*

*☺ Կինը, հայելու առաջ պտտվելով, հարցնում է ամուսնուն.*

*- Սիրելի'ս, քեզ ի՞նչն է իմ մեջ ավելի դուր գալիս՝ իմ գեղեցիկ դե՞մքը, թե՞ իմ շքեղ մարմինը:*

*- Քո հումորի զգացումը:*

# ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԻՆՁ ՈՒԺ Է ՏԱԼԻՍ ՀԱՎԱՏԸ ԵՐԿՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՆԴԵՊ»

(Սկիզբը` 1-ին էջում)

Նշենք, որ Հայաստանի նախագահի երդմնակալման արարողությանը, ընթացակարգի համաձայն, օտար երկրների առաջին դեմքերը չեն հրավիրվում: Բացառություն չկազմեց նաեւ ներկայիս միջոցառումը, որին ներկա էին առանձին երկրներից ժամանած հյուրեր:

Վրաստանից երդմնակալության արարողությանը ներկա էին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն, Վրաստանի խորհրդարանի Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի շրջաններից մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, խորհրդարանի համամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը: Արարողությանը մասնակցում էին նաեւ Վրաստանի «Գործընկերային հիմնադրամի» նախագահ Դավիթ Սագանելիձեն, «Ինդուստրիալ գրուպ»-ի ղեկավար, խորհրդարանի նախկին պատգամավոր Դավիթ Բեժուաշվիլին:

**Ստորեւ ներկայացնում ենք հատվածներ` Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի ծրագրային ելույթից:**

## ՎԻԹԽԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ` ԵՐԿՐԻ, ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

Ազգային ժողովի հատուկ նիստում, երդմամբ, ՀՀ նախագահի լիազորությունները ստանձնած Արմեն Սարգսյանը պաշտոնակալումը վիթխարի պատասխանատվություն է համարում երկրի, ժողովրդի եւ պատմության առջեւ: «Այսօր ինձ մեծ պատիվ է վիճակվել ստանձնելու ՀՀ նախագահի բարձր պաշտոնը: Այն ինձ մղում է լարել իմ ողջ ուժերն ու եռանդը` արդարացնելու այն վստահությունը, որ մարտի 2-ին իմ հանդեպ ցուցաբերեց ՀՀ ազգային ժողովը` արդարացնելու նաեւ այն հույսերը, որ ինձ հետ կապում են Հայաստանի բնակչության ամենատարբեր շերտերը` մտավորականությունից մինչեւ պարզ քաղաքացիներ, ինչպես նաեւ Արցախի եւ Սփյուռքի մեր հայրենակիցները, որոնք սրտացավ եւ ուշադիր հետեւում են մայր հայրենիքի ձեռքբերումներին ու մաքառումներին: Ինձ ուժ է տալիս հավատը` երկրի եւ ժողովրդի ապագայի հանդեպ, հավատը` Հայաստանի քաղաքացիների եւ աշխարհով մեկ սփռված քույրերի ու եղբայրների աշխատասիրության ու տաղանդի հանդեպ»:

## «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՈՂՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԱՆԳՆԱԾ Է ԱՐՑԱԽԻ ԹԻԿՈՒՆՔԻՆ»

«Այսօր մենք գտնվում ենք Առաջին Հանրապետության հիմնադրման 100-ամյակի շեմին, եւ` անցում կատարում պետական կառավարման նոր` խորհրդարանական համակարգի:

Այսինքն, մի կողմից, ունենք հանրապետական կարգերի 100-ամյա պատմություն, մյուս կողմից, խորհրդանշական կերպով սկսում ենք նոր էջից:

Մեկ դար առաջ, հայ ժողովրդի ծանրագույն կորուստներից հետո, գերմարդկային ջանքեր եւ սխրանք էր պետք` փրկելու եւ ապրեցնելու այն փոքրիկ հողակտորը, որը մնացել էր մեր մեծ Հայրենիքից: Ի պատիվ նախորդ սերունդների, թե' Առաջին, թե' Երկրորդ Հանրապետության օրոք, մեր ժողովուրդը կարողացավ ոչ միայն ոտքի կանգնել, ուղղել մեջքը, այլ նաեւ` արժանապատիվ կերպով ներկայանալ աշխարհին: Հենց դրա շնորհիվ մեզ` մեր ներկա սերնդին, բախտ վիճակվեց ոչ միայն հռչակել Երրորդ Հանրապետությունը, այլեւ կայացնել մեր Հայրենիքի անկախությունը: Ամրապնդել մեր ինքնուրույնությունն ու ինքնիշխանությունը: Ստեղծել ամուր եւ հզոր բանակ: Հանուն Արցախի մղած հաղթական ազատամարտը մեզ վերադարձրեց մեր ազգային արժանապատվությունը: Այն բարձրացրեց մեր ոգին:

Եվ այսօր, որեւէ մեկը թող չկասկածի, որ Հայաստանը եւ ողջ հայ ժողովուրդը կանգնած է Արցախի թիկունքին ու պայքարելու է նրա արդար իրավունքների համար»:

## «ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ Է ՍՏԵՂԾՈՒՄ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ»

«Ես մեծապես գնահատում եմ այն վիթխարի աշխատանքը, որ մեր ժողովրդի տոկունության, համբերության եւ հերոսության շնորհիվ, ու, շատ հաճախ, նաեւ նրա մեծ զրկանքների գնով, վերջին երեք տասնամյակի ընթացքում, կատարվել է Հանրապետության երեք նախագահների` Լեւոն Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի ղեկավարությամբ:

Ժամանակն, իհարկե, լիակատար գնահատական կտա մեր անցած ուղուն, սակայն այսօր իսկ կարելի է ամենայն անաչառությամբ եւ վստահությամբ ասել, որ, ԽՍՀՄ փլուզման պայմաններում, Սպիտակի ավերիչ երկրաշարժի, Արցախի գոյամարտի, քայքայված տնտեսության ու շրջափակման պայմաններում, այնուամենայնիվ, մեզ հաջողվել է ստեղծել պետական կուռ համակարգով, բաց հասարակության գաղափարով եւ համամարդկային արժեքներով առաջնորդվող երկիր: Երկիր, որն, իրավամբ վայելում է համաշխարհային հանրության հարգանքը եւ վստահելի գործընկերոջ համբավը: Հակառակ դեռեւս առկա խնդիրներին, սա պատմական շատ կարեւոր ձեռքբերում է:

Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը եւ` Եվրոպական միության հետ ստորագրված, համապարփակ եւ ընդլայնված համագործակցության համաձայնագիրը երկրի զարգացման համար նոր հեռանկարներ եւ հնարավորություններ են բացում: Իսկ կառավարման խորհրդարանական համակարգը լավագույն պայմաններ է ստեղծում դրա համար: Այս առումով ես ուզում եմ արժանին մատուցել նախագահ Սերժ Սարգսյանի քաղաքական հեռատեսությանը եւ պետական գործչի ու կազմակերպչի հմտությանը»:

## «ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՈԳՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Է»

«Հայ ժողովրդի հերոսական անցյալն ու փորձը ցույց են տալիս, որ մեր պատմությունն առավելապես ոգու պատմություն է: Առանց այդ ոգու եւ հավատի, մենք չէինք կարող խոր հնադարից հասնել այսօր, եւ այդ ընթացքում համաքայլ ընթանալ` առաջավոր մարդկության հետ ու մեր նպաստը բերել համաշխարհային առաջընթացին: Մենք եղել ենք արդի համամարդկային արժեքների ակունքներում` սկսած Հին Հռոմի ու Հունաստանի դասական շրջանից, քրիստոնեության ծագումից մինչեւ մեր օրերը: Իրավամբ կարող ենք հպարտանալ, որ ժառանգներն ենք հազարամյակների ընթացքում Հայկական բարձրավանդակի վրա ձեւավորված ու կայացած հայկական յուրահատուկ ու ինքնատիպ քաղաքակրթության:



Ժամանակային եւ տարածական այդ վիթխարի տիրույթներում` մենք տարբեր ժողովուրդների հետ համերաշխ համակեցության անգնահատելի ու անանց փորձ ենք ձեռք բերել: Մեր ողջ պատմությամբ մենք ապացուցել ենք, որ արարող, ստեղծագործող, հաշտ ու խաղաղ ժողովուրդ ենք: Ահա թե ինչու, Հայաստանը հետեւողականորեն առաջ է տանում բոլոր հակամարտությունները եւ քաղաքական խնդիրները խաղաղ եւ բանակցային ճանապարհով լուծելու քաղաքականությունը, Ցեղասպանությունները եւ մարդկության դեմ գործած այլ հանցագործությունները կանխարգելելու քաղաքականությունը:

Այն մեծ ողբերգությունը, որը հայ ժողովուրդը կրել է 100 տարի առաջ` Մեծ Եղեռնի տարիներին, զգոնության դաս պետք է լինի բոլորի համար: Ուստի, այսօր Հայոց ցեղասպանության ճանաչումը ինքնանպատակ չէ: Մարդկության դեմ գործած այդ ահավոր ոճրի միջազգային ճանաչումը եւ դատապարտումը կարեւոր քայլ է` դրա կրկնությունը որեւէ տեղ աշխարհում բացառելու նպատակով»:

## «ՄԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԿՀԱՍՆԵՆՔ, ԵԹԵ ՈՉ ՄԻԱՅՆ ՔՆՆԱԴԱՏԵՆՔ, ԱՅԼԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՐԿԵՆՔ»

«Այսօր մեր երկրի եւ ողջ ժողովրդի համար առանցքային է մնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ եւ բանակցային կարգավորումը: Դրա առաջին երաշխիքը, իհարկե, հզոր Հայաստանը եւ ամուր Արցախն են: Իրոք, արդարացի լուծման հասնելու եւ Արցախի ժողովրդի անքակտելի իրավունքները լավագույնս պաշտպանելու համար` մենք պետք է շարունակենք կերտել ամուր, տնտեսապես զարգացող, ծաղկուն եւ հզոր Հայաստան:

Հանուն այդպիսի Հայաստանի` մենք պետք է ապահովենք մեր քաղաքացու ինքնադրսեւորման համար լավագույն միջավայրը: Միասին պետք է հետեւողական պայքար մղենք պետական համակարգում, հասարակության մեջ, մեր շրջապատում առկա բոլոր բացասական եւ արատավոր երեւույթների դեմ: Կոռուպցիայից մինչեւ սոցիալական անարդարություն, անտարբերությունից մինչեւ անպատասխանատվություն: Այս անզիջում եւ արդար պայքարում մեզանից յուրաքանչյուրի դերակատարումն անհրաժեշտ է:

Մենք կհաջողենք, եթե ոչ միայն քննադատենք, այլ նաեւ լուծումներ առաջարկենք, եթե, ջրբաժաններ ստեղծելու փոխարեն, համախմբվենք եւ աշխատենք միասին»:

## «ՓՈՔՐ ԵՐԿԻՐ` ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱԶԳ. ՍԱ Է ՄԵՐ ԷՈՒԹՅՈՒՆԸ»

«Հանուն համազգային նպատակների իրականացման` մեր առաջնահերթություններից պետք է լինի Հայաստան-Արցախ-Սփյուռք միասնության համակողմանի ամրապնդումը եւ նրա ներուժի առավել արդյունավետ իրացումը:

Մեր ազգային միասնության ամենակարեւոր գրավականն ու հենարանը եկեղեցին է, համաշխարհային ազգային մի կառույց, որի շուրջ, դարեր ի վեր, համախմբվել է մեր ողջ ժողովուրդը: Պետք է անենք հնարավոր ամեն բան` արհեստական հակասությունների վերացման եւ մեր հավաքականության իրական ուժի գիտակցման ուղղությամբ: Մշակենք համազգային խնդիրների լուծմանը ծառայող արդյունավետ նոր մեխանիզմներ: Միացյալ օրակարգ, ընդհանուր պատասխանատվություն եւ միասնական ջանք: Վստահ եմ` մենք օր առաջ հասնելու ենք այս բանաձեւի ընկալմանը եւ կենսագործմանը:

Փոքր երկիր` համաշխարհային ազգ. սա է մեր էությունը»:

## «ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՆԵՐԳՐԱՎԵՆՔ ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ, ՓՈԽԱՌՆԵՆՔ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԸ»

«Հավատ, վստահություն, արդարություն եւ ամենօրյա բարեխիղճ աշխատանք. այս արժեքներն են, որ կարող են խթանել մեր հասարակության ստեղծագործական ուժերն ու եռանդը:

Այսօրվա եւ վաղվա նկատմամբ հավատն ու վստահությունը, տնտեսությունն աշխուժացնելու հստակ տեսլականը եւ դրա շոշափելի արդյունքները կարող են ոչ միայն խթանել տնտեսական աճը, ներքին եւ արտաքին ներդրումների հոսքը, այլեւ արգելակել արտագաղթը, առավել` Հայրենիք վերադարձնել մեր հայրենակիցներից շատերին:

Սակայն, ինչքան էլ գրավիչ եւ տեսականորեն հիմնավոր լինեն լուսավոր ապագայի խոստումները, մարդիկ ուզում են իրենց առօրյայում այսօր տեսնել դրանց պտուղները: Եվ նրանք իրավացի են: Աշխարհը, ուր ապրում ենք մենք եւ ապրելու են մեր երեխաները, փոփոխվում է շատ արագ, վերածվում` մրցակցության հսկայական դաշտի: Մենք պետք է դրան պատրաստ լինենք, ներդրումներ անենք գիտության, նոր տեխնոլոգիաների, կրթության ու մշակույթի ոլորտներում: Կապ հաստատենք աշխարհի լավագույն գիտական, կրթական եւ հետազոտական կենտրոնների հետ` Արեւմուտքից Արեւելք, Հյուսիսից Հարավ: Ներգրավենք նոր գաղափարներ, փոխառնենք լավագույն փորձը: Եվ այս ամենի հիման վրա ստեղծենք մեր յուրօրինակ լուծումները, եւ դրանք առաջարկենք աշխարհին»:

## «ՄԵԶԱՆԻՑ Է ԿԱԽՎԱԾ, ԹԵ ԻՆՉՊԻՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԿԱՌՈՒՑԵԼ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ»

«Մենք ապրում ենք հարափոփոխ աշխարհում` լի բազմաբնույթ վտանգներով, սպառնալիքներով եւ մարտահրավերներով: Սակայն, մեզ համար այն լեցուն է նաեւ նոր եւ գրավիչ հնարավորություններով: Եվ մեզնից է կախված` կարողանալո՞ւ ենք, արդյոք, օգտվել այդ պատմական հնարավորություններից: Մեզնից է կախված, թե 21-րդ դարում ինչպիսի Հայաստան ենք ուզում կերտել: Հայաստան, որն ընդունակ կլինի դիմագրավել դարի մարտահրավերներին եւ արժանի տեղ գրավել առաջավոր ազգերի շարքում: Սա, իհրավի, պատմական հնարավորություն է: 21-րդ դարը մտքի դար է, գիտական թռիչքի դար, եւ դրան համեմատ մենք պետք է կերտենք նոր` Երիտասարդ Հայաստան:

Դինամիկ, ճկուն եւ ստեղծագործ Հայաստան:

Երկիր, որը կմարմնավորի մեր ժողովրդի իմաստությունն ու տաղանդը, կհամապատասխանի բոլորիս իղձերին եւ կդառնա բոլորիս հպարտության եւ ոգեւորության աղբյուրը»:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ԱՊՐԻԼ

*15.04.2018. Աշխարհամատրան կիրակի (Կանաչ կիրակի)*



Հիսուս Քրիստոսի Հարության՝ Սուրբ Զատկին հաջորդող երրորդ կիրակին կոչվում է Աշխարհամատրան կիրակի՝ ի հիշատակ Երուսաղեմի առաջին եկեղեցու հիմնադրման: Այս եկեղեցին Սիոնի վերնատունն է համարվում, որտեղ Հիսուս Քրիստոսը հաստատեց Հաղորդության խորհուրդը: Աշխարհամատրան կիրակին կոչվում է նաեւ Կանաչ կիրակի, որը, ըստ Մաղաքիա արք.Օրմանյանի, տոնի ժողովրդական անվանումն է՝ կապված բնության, գարնանային զարթոնքի հետ:

## ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

# ՄՈԼԱԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

*Մոլախաղերի մասնակցությունն արգելվում է նաեւ մինչեւ 21 տարեկան անձանց համար: Ինչպես հայտարարել է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Լեւան Գոգիչաիշվիլին՝ մոլախաղերի մասնակցության տարիքային սահմանը պետք է հասցնել 23-ի:*




«Վիճակախաղերի, մոլախաղերի եւ շահութախաղերի կազմակերպման մասին» օրենքում կատարվելիք փոփոխությունների նախագծում նախատեսված է, որ նման խաղերի մասնակցության տարիքը վավերացվել է մինչեւ 21-ը, թեպետ, ըստ իս, այդ տարիքը պետք է հասցվի 22-ի կամ 23-ի»,- հայտարարեց Լեւան Գոգիչաիշվիլին:

Հիշեցնենք, որ, վերոնշյալ օրինանախագծի շուրջ, աշխատանքն ավարտվեց 2017 թվականի նոյեմբերին, թեպետ, այն մինչ օրս չի ընդունվել: Ինչպես տեղեկացրեց պատգամավորը՝ օրենքի ընդունումը ձգձգվում է կառավարության հետ խորհրդատվությունների անցկացման պատճառով: Թեպետ վստահեցնում է, որ այն անպայմանորեն կընդունվի գարնանային նստաշրջանում:

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

# ՎՐԱՍՏԱՆԸ ՄԻԱՑԱՎ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

*Եվրահանձնաժողովի եւ Եվրախորհրդարանի նախաձեռնությամբ, 2018 թվականը հայտարարվել է «Մշակութային ժառանգության տարի»:*

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի մշակույթի նախարարությունը՝ Վրաստանը պաշտոնապես միացել է այդ նախաձեռնությանը:

Գերատեսչությունում նշեցին, որ կպատրաստվեն տեսահոլովակներ, անիմացիոն ֆիլմեր, ինֆոգրաֆիկներ, Եվրամիության հիմնադրույթի համաձայն, ծրագրվում են խորհրդաժողովներ:

Անցյալ տարվա դեկտեմբերի 7-ին, Միլանում անցկացված եվրոպական մշակութային գագաթաժողովում, 2018 թվականը պաշտոնապես հռչակվեց «Մշակութային ժառանգության տարի»: Այն կոչված է ուշադրությունը կենտրոնացնել մշակութային ժառանգության հարստության, ընդհանուր նույնականացման զգացումի ձեւավորման եւ Եվրոպայի ապագայի գործում դրա դերի վրա:

## ՏՀԱՃ ՄԻՋԱԴԵՊ

# ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ ԽԱՂԱԴԱՇՏՈՒՄ

*Ապրիլի 9-ին, Թբիլիսիի Բելիաշվիլու փողոցում գտնվող ֆուտբոլի խաղադաշտում, ընդհարում է տեղի ունեցել տեղի բնակիչների եւ Վրաստանում ապրող օտարերկրյա քաղաքացիների միջեւ: Բանավոր եւ ֆիզիկական դիմակայության փաստով՝ Վրաստանի ՆԳ նախարարությունը գործ է հարուցել:*

Ինչպես տեղեկացնում են ականատեսները՝ ընդհարումը տեղի է ունեցել նրանից հետո, երբ օտարերկրացիները հրաժարվել են խաղադաշտը զիջել երեխաներին: Բանավոր դիմակայությունից հետո՝ սկսվել է կռիվ, որին երկու կողմից մասնակցել է շուրջ երեք տասնյակ մարդ:

Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, մեկնաբանելով Բելիաշվիլու փողոցում տեղի ունեցած միջադեպը, նշեց, որ ինքը դիմել է Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Լեւան Կոբիաշվիլուն՝ հենց այդ խաղադաշտում տեղացիների եւ օտարերկրացիների միջեւ ընկերական հանդիպում անցկացնելու առաջարկությամբ: Ստացված տեղեկատվության համաձայն՝ պատրաստ է կազմակերպել նման հանդիպում:

## ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ ԼԵՅԼԱ ԱԲԱՇԻՁԵՆ



Կյանքի 89-րդ տարում, Թբիլիսիում, վախճանվեց խորհրդային ու վրաց դերասանուհի եւ կինոռեժիսոր Լեյլա Աբաշիձեն:

Հայտնի դերասանուհին 1951 թվականին ավարտել է Թբիլիսիի թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետը: Նա նկարահանվել է կատակերգական եւ դրամատիկական դերերում եւ՝ իրեն փորձել ռեժիսորի ամպլուայում՝ սեփական սցենարով բեմադրելով «Թբիլիսի-Փարիզ եւ վերադարձ» կատակերգությունը: Կինոդերասանուհին, իր կարիերայի ընթացքում, նկարահանվել է խորհրդային ու վրացական 30 ֆիլմերում: Մասնավորապես, «Քաջանա», «Նրանք իջան լեռներից», «Մայա Ծղնեթելին», «Հանդիպում՝ անցյալի հետ», «Վարպետաց վարպետի աջը», «Ճռճռանը», «Հանդիպում լեռներում» եւ այլն:

## ՍՊՈՐՏ

# 14,1 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ ՈՒԵՖԱ-ԻՑ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Եվրոպայի ֆուտբոլային ասոցիացիայի միությունը (ՈՒԵՖԱ) ռեկորդային դրամաշնորհ է հատկացնում Եվրոպայում ֆուտբոլի զարգացման համար:

2020-2024 թվականներին ՈՒԵՖԱ-ն 55 ազգային ասոցիացիաներին, HatTrick V նախագծի շրջանակներում, հատկացնում է 775,5 միլիոն եվրո: Այսպիսով, Եվրոպայի ազգային ասոցիացիաները, այդ թվում նաեւ Վրաստանի ֆուտբոլային ֆեդերացիան, 2020-2024 թվականներին, կստանա շուրջ 14,1 միլիոն եվրո: Այդ գումարը 30 տոկոսով գերազանցում է 2016-2020 թվականների համապատասխան նախագիծը, որը կազմում է 600 միլիոն եվրո:

Նշենք, որ 2004 թվականից, վերոնշյալ նախագծի շրջանակներում, իրականացվել է 1,8 միլիարդ եվրոյի ներդրում:



## Խ Ա Չ Բ Ա Ռ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Քաղաք Ռուսաստանում: 8.Այնպիսի (արեւմտ.): 9.Չինաստանի կառավարող դինաստիան 1368-1644 թթ՝ Յուան դինաստիայից հետո: 10.Երգչուհի Ալյոնա ...: 13.Որեւէ բանի ընդհանուր քանակությունը: 18.Հնդիկ իշխանի տիտղոս: 19.Խատուտիկ, պուտպուտ: 22.Մարզ Հայաստանում: 23.Խաղաղության խորհրդանիշ թռչուն: 28.Վաղեմի, հին: 29.Ճգնել: 32.Պարգեւ, ընծա: 33.Բարձր ազնվականության ժառանգական տիտղոս Անգլիայում: 34.Ապավեն, պաշտպան: 37.Օժանդակ բայ: 39.Գործվածքի տեսակ: 41.Նորվեգացի ճանապարհորդ, հետախույզ ... Ամունդսեն: 44.Կտորի «մշակումը»՝ նախքան կարելը: 46.Լեռ Հայկական Տավրոսի լեռնահամակարգում: 47.Պայտ: 49.Ձկան տեսակ: 50.Գինեմատակարար, տակառապետ: 52.Ցաք ու ...: 54.Նստաշրջան: 55.Խորթ մայր, մայրացու: 56.Ֆրանսիացի գրող ... դը Մոպասան: 57.Խակ, չհասած: 58.Վրացի պոպ երգչուհի ... Ծուրծումիա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Վրաստանի ժողովրդական արտիստ ... Բրեգվաձե: 2.Վրաց շախմատիստուհի, աշխարհի չեմպիոնուհի ... Գափրինդաշվիլի: 3.Լեռ Վրաստանում, Կովկասյան բարձրավանդակի վրա: 4.Չափածո ստեղծագործության հնչյունային ձեւավորման հիմնական կողմերից մեկը: 5.Հունական այբուբենի տառ: 6.Ճապոնացի ռեժիսոր ...Կուրոսավա: 11.Լատվիացի երաժիշտ Վալդիս ...: 12....-Դամ դե Պարի: 14.Ձկնորսի ցանց: 15.Ֆրանսիացի դերասանուհի Իզաբել ...: 16.Հրետանային զինամթերք: 17.Գետ ՌԴ-ում: 20.Իտալական ռեստորան Թբիլիսիում: 21.Բրիտանական հանրաճանաչ բանաստեղծ, գրող Օսկար ...: 24.Քաղաք Թուրքիայի արեւելյան մասում, պատմական Արեւմտյան Հայաստանում: 25.Նիհար, լղար: 26.Իսպանացի ֆուտբոլիստ, դարպասապահ ... Կասիլյաս: 27.Գյուղ Հայաստանում, Լոռու մարզում: 30.Ամերիկացի բռնցքամարտիկ Կասիուս ...: 31.Տեսնում են քնի մեջ: 35.Ատամ: 36.Ամերիկացի նկարչուհի Ագնես Դին ... : 37.Թիկունքի կողմը: 38.Քիմիայի մասնագետ: 40.Հին հունական դիցաբանությունում տիտան, որն իր ուսերին պահում էր երկնակամարը: 42.Արու զավակ: 43.Մերձբալթյան պետություն: 44.Ստեփան Զորյանի պատմվածքներից՝ «... գիշեր»: 45.«Ալ Քաիդա» ահաբեկչական կազմակերպության հիմնադիրներից՝ ... Բեն Լադեն: 48.Բառ, որ գործածվում է որպես դրական պատասխանի եւ համաձայնության արտահայտություն Հին եւ Նոր Կտակարաններում: 51.Ահա՝ ըստ գյումրեցու: 52.Երկկճղակավոր կենդանի: 53.Ամերիկյան ավտոմեքենա:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Չմուշկ: 4.Մեկենաս: 11.Դերենիկ: 13.Ինդիրա: 15.Կտրի: 16.Ալիք: 18.Ավո: 19.Կարա: 20.Լոմե: 22.Որդի: 24.Սան: 25.Կայսր: 28.Սերտ: 29.Որակ: 30.Անա: 32.Տարվել: 33.Արեշ: 36.Լուսան: 38.Տրե: 39.Գալա: 42.Մթին: 43.Արթուր: 44.Տրական: 46.Սանա: 49.Արքա: 51.Գրիշաշվիլի: 53.Ան: 54.Նուռ: 55.Նիկո: 56.Ավանակ: 57.Մորուա: 58.Սա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Մադրիդ: 3.Շիրակ: 4.Մեքքա: 5.Եր: 6.Կենարար: 7.Են: 8.Նիկոլ: 9.Ակտ: 10.Դիեգո: 12.Վիլեն: 14.Ալարկոտ: 17.Իր: 21.Որքան: 23.Իրտիշ: 24.Սսկվել: 26.Արագիլ: 27.Յար: 28.Սպարտակ: 30.Ալաստան: 31.Մանուրյան: 34.Եղեմ: 35.Ագի: 37.Նոթեր: 40.Անտաշ: 41.Ագապի: 45.Անի: 46.Սինա: 47.Աշուն: 48.Նառա: 49.Արիա: 50.Քառս: 51.Գեա: 52.Լառ: 55.Նու:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445